

3578

14 JUL 2000

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆԿԱԿՆՈՒԹԱԿԱՆ  
ՈՒՆԵՏԻՆ ԳԻՑ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՅՈՒՐՈ

Ձեռագրի իրավունքով

1-2

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Գ. ԵԴԻԼՅԱՆ

**ՁԵՌՆԱՐԿ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ**

ՅԵՐԵՎԱՆ — 1930

15 APR. 2013

5-16  
UR

3578

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Ա. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԴԻԱԼԵԿՏԻ-ԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ**

**Բ. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

1. Որպեսզի սպառնալից զիտողութեան մեթոդ.
2. Ե սպերիմենտալ մեթոդ.
3. Համեմատական գենետիկ մեթոդ.
4. Ինքնազիտողութեան մեթոդ.
5. Տեստերի մեթոդ.
6. Անկետալի մեթոդ.

**Ա Ղ Բ Յ Ո Ւ Բ Ն Ե Ր**

1. Проф. К. Корнилов: Учебник психологии *գլուխ I-ի* 1929.
2. Корнилов, Рыбников, Смирнов: Простейшие школьные психологические и педологические опыты 1927.
3. Н. Добрынин. Введение в психологию 1929 *գլուխ I.*

6073-55

**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

**Ա. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԴԻԱԼԵԿՏԻ-ՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ**

1. Դիալեկտիկ-մատերիալիստական հոգեբանութեան անկասկա-  
ձելի, ռեալ փաստ և համարում հոգեկան յերևույթների գոյութունը;  
դրանք իրենք իրենցով, ամփիջականորեն գիտակցվող իրողութուններ  
են: Յեթև մեկն ինքն իր մեջ սուբյեկտիվորեն գիտակցում և հոգեկան մի  
ապրում, հենց այդ ապրումով էլ պայմանավորվում և ապրման ռեալ  
գոյութունը: Հոգեկանն այդպիսի ռեալ փաստ և, ինչպես մատերիան և  
նրա մյուս հատկանիշները:

«Վոր միտքը և մատերիան իրական են, այսինքն՝ գոյութուն ու-  
նեն, այդ ճիշտ է»: Լենին:

«Միտքն իրական է, ինչպես մյուս առարկաները»: Դիցզեն:

«Վոր գրանք (միտքը, կամքը, զգայութունը) գոյութուն ունին,  
բարձրանշյուրը վորոշակի գիտե ինքն իրենով»: Բուխարին:

«Մյանքը, զգայութունը, մտապատկերը կարող են ըմբռնվել միայն  
անմիջապես, իրենք իրենցով»: Ֆեյերբախ:

«Դիալեկտիկական մատերիալիզմը վոր միայն չի ժխտում հոգեկան  
պրոցեսների գոյութունը, այլ նրանց այն աստիճանի ռեալականութուն  
և վերագրում, ինչքան մատերիայի այլ հատկանիշներին, որ շարժ-  
մանը»: Կոբնիով:

2. Դիալեկտիկական մատերիալիզմի հիմնադիրները և հետագա ան-  
փանի ներկայացուցիչները վորոշակի ընդունել և ընդունում են մտքի,  
բանականության, իդեական ֆակտորի դերը մարդկային կյանքում:  
Իդեականը կամ իդեոլոգիականը համարվում է արդյունք անտեսական  
ներքնաշնչի, բայց միևնույն ժամանակ ընդունվում է, վոր նա ևս ազ-  
գում է այդ հիմքի վրա: գոյութուն ունի փոխազդեցութուն:

«Իդեոլոգիական հարաբերութունների գումարը կազմում է հասա-  
րակական անտեսական ստրուկտուրան, ռեալ հիմքը, վորի վրա բարձ-  
րանում է իրավական և քաղաքական վերնաշենքը»: Մարքս:

«Բարձրական, իրավական, փիլիսոփայական, գրական-գեղար-  
վեստական և հասարակական կյանքի մյուս բոլոր կողմերի զարգացում»:

6259

Հանգչում է տնտեսական բաղադրի վրա: Բայց դրանք բոլորն աղբյուրվ իրար վրա, ազդում են նաև տնտեսական բաղադրի վրա» . Պլեխանով:

«Մատերիալիզմը չխանգարեց Մարքսին ընդունելու պատմության մեջ հոգու ներգործությունը, վորպես մի ուժի, վորի ուղղությունը յուրաքանչյուր սովյալ ժամանակում վորոշվում է տնտեսության զարգացման ընթացքով» . Պլեխանով:

«Վերնաշենքը (իդեականը-իդեոլոգիականը) դուրս է աճում նյութական արդյունաբերությունից և առանձնանում է իրրև) ինքնուրույն ճյուղ հասարակական գործունեության... իդեոլոգիականն ազդում է տնտեսական հարաբերությունների վրա նաև իր կողմից... հասարակական զանազան կարգի յերևույթների մեջ տեղի յե ունենում անդադար փոխազդեցության պրոցես» . Բուխարին:

3. Հոգեկանը հատուկ կերպով բարձր կազմակերպված մատերիալի հատկանիշը, ուեալ վորակը, մատերիալ պրոցեսների ներքին-սուրբյեկտիվ վիճակն է:

«Չգալուսթյունը, միտքը, գիտակցությունը հատուկ կերպով կազմակերպված մատերիալի բարձր պրոդուկտն են» . Լենին:

«Հոգեկանը, գիտակցությունը պրոդուկտ են այն առանձնապես բարդ կտոր մատերիալի, վոր մարդու ուղեղ է կոչվում» . Լենին:

«Հոգեկան-գիտակցական յերևույթները վորոշ ձևով կազմակերպված մատերիալի հատկանիշը-Փունկցիան են» . Բուխարին:

«Մատերիալի շարժում-ալը և՛ տաքություն, լույս, էլեքտրականություն, մագնիսականություն, քիմիական միացումներ ու քայքայումներ, կյանք և վերջապես գիտակցություն» . Ենգելս:

«Մատերիալիստների ներկա կարծիքն այն է, վոր զգալուսթյունը (հոգեկանը) ընդունվի իրրև շարժվող մատերիալի հատկանիշներից մեկը» . Լենին:

«Գիտակցությունը մատերիալի ներքին վիճակն է» . Պլեխանով:

«Չգալուսթյունը, միտքը, գիտակցությունը մատերիալի շարժման ներքին վիճակներն են» . Ենգելս:

«Գիտակցությունը (կամ հոգեկանը) Ֆիզիքական և Ֆիզիոլոգիական այն յերևույթների սուբյեկտիվ արտահայտությունն է, վորոնք տեղի յեն ունենում որգանիզմի մեջ և արտաքնապես արտահայտվում են շարժումներով» . Կորնիլով:

4. Դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետով հոգեկանը մատերիալ չէ, գուտ ֆիզիքական պրոցես չէ, այլ վորակական մի նոր յերևույթ, վոր մատերիալ պրոցեսի հետ միասնաբար է հանդես գալիս:

«Մենք, անկասկած, յերրևե եքսպերիմենտայ ձևով մտածողությունը վեր կածենք ուղեղի մոլեկյուլար և քիմիական շարժումների, բայց մի՞թե դրանով սպառվում է մտածողության էությունը» . Ենգելս:

«Անվանի մատերիալիստներից և վոր մեկը գիտակցությունը շարժման չի վերածել և մեկը բացատրել մյուսով» . Պլեխանով:

«Չգալուսթյունը տարրեր է իր որգանական նախադրյալներից» . Ֆելերբախ:

«Մատերիալիստների կարծիքն այն չէ, վոր զգալուսթյունը վերածվի մատերիալի, այլ այն, վոր զգալուսթյունն ընդունվի իրրև շարժվող մատերիալի հատկանիշներից մեկը» . Լենին:

«Մատերիալիզմն ընդունում է որյեկտի և սուբյեկտի միասնությունը և վոր նույնացումը» . Պլեխանով:

«Մտածողության և կեցության միասնություն-բոլորովին էլ չի նշանակում նրանց նույնացումն» . Պլեխանով:

Մարդը մի ամբողջական որգանիզմ է, վոր դրսի և ներքին գրգռումների վերաբերմամբ վորոշ գործողություններ է կատարում, այդ գործողություններն ունեն արտաքին մատերիալ կողմ (շարժումներ, խոսել, աշխատանք, շարժվել տարածության մեջ, կծկվել և այլն) ինչպես և ներքին սուբյեկտիվ կողմ (հոգեկան-գիտակցական սպրումներ): Հոգեկան յերևույթները մատերիալ յերևույթներից զատված-առանձնացած չեն հանդես գալիս, այլ միացած նրանց հետ, հոգեկան և մատերիալ պրոցեսները կազմում են մի միասնական ամբողջություն, մատերիալ պրոցեսից դուրս հոգեկան սպրումն գոյություն չունի: Մա մոնիստական տեսակետ է:

5. Հոգեկան յերևույթները դիմադրիկ, ակտիվ դարգացող, մըլտատպես փոփոխվող պրոցեսներ են:

6. Հոգեկան յերևույթներն իրարից առանձնացած չեն հանդես գալիս, այլ իրար միացած, կապակցված, կոմպլեքսներով: Հոգեկան պրոցեսների ողակների վրա իշխում է դետերմինացիա (պայմանավորվածություն), մի յերևույթ մյուսի պատճառն է, մեկը մյուսի՝ հետևանքը: Սյակխոսով՝ հոգեկան յերևույթների առաջացումն ու դարգացումը յենթակա յե սրինակարգուբյան:

7. Հոգեկան յերևույթների վորոյլսությունը պայմանավորված է ացիալական, բիոլոգիական և մտածար կլիմայական-աշխարհագրական փակտրներով:

8. Հոգեկան յերևույթների դարգացման մեջ իշխում է թռիչքաձևություն ( скачка ): Մարդու վարմունքի առանձն մասերի քա նակական բարդացումները, թռիչքի ձևով տալիս են նոր վորակի վարմունքներ: Մարդու տարրեր վորակի վարմունքները կարելի յե հասկանալ այդ որենքի գոյությունը: Որ. քաղցր համի քանակական հավել-

լումբ մի փորոշ աստիճանի վրա փոխվում է դառնութեան. բախականու-  
թյունը, յերբ վորոշ ուժ է տեսողութուն ունի, փոխվում է անբախակա-  
նութեան. խնայողութունը փորոշ աստիճանի վրա դառնում է ժլատու-  
թյուն և այլն:

9. Հոգեբանութեան առարկան. Յեթե հոգեկան յերևույթներն ան-  
կասկածելի ռեալ փաստեր են և կուրտուրական կյանքի համար կարև-  
վոր գործոն, յեթե նրանք ծառերիայի ուրույն հատկանիշն են և չեն  
լուծվում Ֆիզիոլոգիական պրոցեսների մեջ, բնական է, վոր գոյութեան  
պետք է ունենա մի գիտություն, վորը հատկապես ուսումնասիրում է  
այդ յերևույթները. այդ գիտությունը հոգեբանությունն է: Դիալեկ-  
տիկական մատերիալիզմի հին և նոր ներկայացուցիչները միշտ էլ կոդ-  
մնակից են յեղել հոգեբանութեան գոյութեան:

«Համենայն դեպս հոգեբանութեան մեջ իմացութեան աղբյուրն այլ  
է, յեթե համեմատելու լինենք Ֆիզիոլոգիական իմացութեան հետ».  
Ֆեյերբախ:

Դիցե՛ք ինչ կարծիքով ես միմիայն ուղեղի հետապոտութեամբ չի կա-  
րելի բացատրել և լուսարանել հոգեկան կյանքը:

Պրեխանովը համակարծիք է Ֆեյերբախին այս խնդրում, նա գր-  
ում է.

«Ըստ Ֆեյերբախի հոգեբանութեան մեջ իմացութեան աղբյուրը բո-  
լորովին այլ է, քան Ֆիզիոլոգիայի մեջ»:

«Հոգեբանութեան մեջ մեխանիկ մտակցումը, բնական է, պետք է  
բերեր գիտակցութեան ռեալականութեան և մարդու վարժունքի վորա-  
կական տարբերութեան մերժման: Մարքսիստական հոգեբանութեանը  
ձգտում է հաղթահարելու ինչպես սուբյեկտիվ, նույնպես և օբյեկտիվ  
հոգեբանութեան միակողմանությունը և ապա նրանց սինթեզը».  
Գեբուս:

«Այս ու այն բարձրագույն գալորներում, վերացրել են հոգեբանու-  
թեան դասավանդումը, յենթադրելով, վոր ռեֆլեքտիվութեանը սպառ-  
վում է խնդրը: Բայց այդ ճիշտ չէ: Միայն օբյեկտիվ և սուբյեկտիվ  
մեթոդների սինթեզը կարող է ապա լրիվ պատկերը».  
Մատլյարով:

«Միայն անգիտությունը և մարքսիստական թեորիան անբախակա-  
նութեանը կարող է մի քանի ընկերների հակառակորդ դարձնել գիտական  
և եքսպերիմենտի վրա հիմնված հոգեբանութեան».  
Բեյսներ:

Ի՞նչ է ուսումնասիրում ժամանակակից հոգեբանությունը: Նա մար-  
դու օրգանիզմը համարում է մի ամբողջություն, վոր ունի բողբոսե-  
տակ ֆունկցիաներ և ուսումնասիրում է այդ օրգանիզմի բոլոր արտա-  
հայտությունները-ֆունկցիաները՝ շրջապատի միջավայրի հետ կապ-

ված: Հոգեբանությունն ուսումնասիրում է մարդու բոլոր տեսակի  
վարմունքների արտաքին-օբյեկտիվ արտահայտությունները՝ միացած  
ներքին-սուբյեկտիվ վիճակների հետ:

### Բ. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ամեն մի գիտություն ունի իր ուսումնասիրութեան առանձին ա-  
ռարկան, այդ առարկան-նյութն ուսումնասիրելու համար ունի նաև  
առանձին մեթոդներ: Մեթոդ ասելով հասկանում ենք ուսումնասիրու-  
թեան ժամանակ գործադրվող աշխատանքի այն ձևերը-յեղանակները,  
վորոնց օգնութեամբ գիտությունը հասնում է նորանոր և ճշգրիտ գիտե-  
լիքների: Հոգեբանությունը լինելով մի ուրույն գիտություն, ու-  
նի նաև իր հետադասման առանձին մեթոդները:

#### 1. Ոբյեկտիվ-պարզ գիտողութեան մեթոդ.

Հոգեկան յերևույթներն ունեն ներքին-սուբյեկտիվ և արտա-  
քին-օբյեկտիվ կողմ. ամեն մի սուբյեկտիվ ներքին ապրումն ունի իր  
արտաքին օբյեկտիվ արտահայտությունները (միմիկա, պանդո միմի-  
կա, խոսել, աշխատանք, ներքին օրգանների պրոցեսներ և այլն):

Ոբյեկտիվ-պարզ գիտողութեան մեթոդի ժամանակ մեր զգայական  
ըմբռնումների օգնութեամբ (աչք, ականջ, մկաններ) դիտում, ըմբռնում  
ենք մեր, ինչպես և օբյեկտների, ներքին ապրումների միմիայն արտա-  
քին արտահայտությունները:

Պատահական, անձրազիր գիտողությունից այս օբյեկտիվ-պարզ  
գիտողությունը տարբերվում է նրանով, վոր վերջինիս ժամանակ գո-  
յություն ունի.

ա) Գիտողութեան նպատակ, վորին յենթարկվում է մեր հետազոտա-  
կան գիտողությունը. ինչ համապատասխանում է այդ նպատակին, այդ  
դարձնում ենք գիտողութեան խնդիր, ինչ անհամապատասխան է, անու-  
շաղբութեան ենք մատնում:

բ) Այստեղ գոյություն ունի կամավոր, դեպի մի վորոշ նպատակ  
ուղղված ուշադրություն. կամավոր ուշադրությունը հնարավորու-  
թյուն է ապրիս բավական յերկար ժամանակ զբաղվել նույն խնդրով:

գ) Այստեղ կա սլանաչափ, ծրագրված, մեթոդական աշխատանք.  
մեր առաջ դրած նպատակին ձգտում ենք հասնել օրոշ ծրագրով, մեթո-  
դով—վորպեսզի ստանանք մշակված և ճիշտ պատկերացումն ուսումնա-  
սիրվելիք նյութի մասին:

Ոբյեկտիվ պարզ գիտողութեան մեթոդն ունի այն թերությունը,  
վոր մենք այդպիսի գիտողութեան ժամանակ չենք կարող գիտելիք յե-

յիւույթը կամուլին առաջ բերել, այլ պետք է սպասենք հաջող դիտարկման, չենք կարող յերևույթի մեջ բոտ մեր ցտնկութեան փոփոխութեան վնասել, այլ յերևույթը պետք է ընդունենք աշխատանքի, ինչպես արված է քննարկել: Այս թերին վերացնում է երասերիմենտալ մեթոդը:

II. Եփայերիմենտալ մեթոդ.

Երասերիմենտալ մեթոդը լախորեն գործադրվում է բնական գիտութեան մեջ, հոգեբանութեան մեջ այս մեթոդը գործադրութեան քրվեց 19-րդ դարում, իսկ հատուկ արժեք ստացավ Մ. Վ. Վունդտի աշխատանքների շնորհիվ:

Երասերիմենտալ մեթոդն ավելի մշակված է կատարելագործված որդեկալի գիտությունների մեթոդ է:

Երասերիմենտալ մեթոդի առավելութեանը հետևյալներն են.

1. Գոյութեան ունի հետազոտութեան, աշխատանքի նպատակ, վոր իշխում է հետազոտման պրոցեսի հաջորդական մոմենտների վրա և առաջ է բերում կամավոր և կենտրոնացած ուշադրություն:

2. Երասերիմենտատորը վոչ թե սպասում է, վոր ուսումնասիրելիք յերևույթը պատահականորեն, բնական պայմաններում առաջանա, վոր ուսումնասիրելի, այլ ինքը կամուլին և արհեստական միջոցներով (զրգիտներով) ցանկացած ժամանակ և ցանկացած քանակով (կրկնութեաններ) առաջացնում է նույն յերևույթը, վորով ուսումնասիրելիք յերևույթը յենթարկում է իրեն:

3. Ուսումնասիրելիք յերևույթը մի այլ տեսակետից ևս, յենթարկվում է երասերիմենտատորին, նա չի թողնում, վոր նույն յերևույթին ամեն անգամ առաջանա նույն կերպ. նույն կառուցվածքով, այլ նույն յերևույթն արհեստականորեն փոփոխութեան է յենթարկում. որ. ուժեղացնում կամ թուլացնում է զրգիտը, զրգիտի մի վորոշ մասը վերացնում է, կամ սո՛րոյջ զրգիտն է վերացնում, զրգիտի մեջ նոր ելմաններ է մտցնում և սպաս դիտում է, թե փոքրվողի վարմունքի մեջ ի՛նչ փոփոխութեաններ են տեղի ունենում: Յեթե զրգիտի փոփոխութեանների և վարմունքի փոփոխութեանների մեջ մնացուն մշտաձևութեան և նկատվում, այդ դեպքում զրգիտի և վարմունքի մեջ յենթարկվում է պատճառական կապակցություն:

4. Երասերիմենտալ ուսումնասիրութեանների արդյունքները կարելի է չափել. Բավերով արտահայտել: Այս դեպքում չի չափվում ինքը հոգեկան յերևույթն, այլ նրա որդեկալի, արտաքին արտահայտութեան:

ները. սա մի անուղղակի չափումն է, վոր գոյութեան ունի նաև բնագիտութեան մեջ. որ. տաքութեանը չափվում է ջերմաչափի սնդիկի ծավալի փոփոխութեամբ: Չափում ենք զրգիտը կամ հոգեկան յերևույթների հետ կապված որդեկալի արտահայտութեանները և այդ չափումները վերագրում նաև հոգեկան սուբյեկտիվ կողմին:

Հոգեբանական երասերիմենտի ժամանակ չափումները լինում են մի քանի տեսակ.

ա) Գրգռի մեթոդ, չափվում է տրված զրգիտը:

բ) Ռեակցիայի կամ արտահայտման մեթոդ, չափվում է փորձի յենթակա անհատի որդեկալի արտահայտութեանները, զրգիտն տրված պատասխանները:

գ) Ժամանակի մեթոդ, չափվում է տված զրգիտի և փորձվողի զրգիտի վերաբերմամբ կատարած ռեակցիայի մեջ անցած ժամանակի մեծութեանը:

դ) Ստատիստիկական մեթոդ, յերբ հաշվում ենք որ թե արված զրգիտներից քանի՛ հասն է մտքում մնացել, քանի՛ հոգի ինչպես են վարվել, բարձրագույն անհատներ միջին թվով ի՛նչ վարմունք են ցույց տվել և այլն:

5. Երասերիմենտալ ուսումնասիրութեան ժամանակ զործ են անվում հատուկ այդ նպատակով պատրաստված ապարատներ (գործիքներ), վորոնք հնարավորութեան են տալիս ավելի նուրբ չափումներ կատարելու և առաջ են բերում ավելի նուրբ զրգիտներ:

6. Երասերիմենտալ մեթոդի առավելութեաններից մեկն էլ այն է, վոր մեկը կատարած փորձնական ուսումնասիրութեանը կարող են կատարել նույնութեամբ նաև ուրիշները և այդ կերպ կոնտրոլի յենթարկել, հշգրտել, մերժել կամ հարստացնել այդ փորձը: Այսպիսով նույն խնդրի ուսումնասիրութեան շուրջը միանում են տարբեր տեղերի ու յերկրների գիտական աշխատավորները:

7. Թե որդեկալի պարզ գիտությունների և թե մանավանդ երասերիմենտալ ուսումնասիրութեան ժամանակ իրարից բաժանված են դիտողը և դիտվողը: Դիտողը—երասերիմենտատորն ունի մի վորոշ նպատակ. Զրգիտը, աշխատանքի մեթոդ, գործիքներ, նա դեկավարում է աշխատանքը: Նրանից տարբերվում է փորձի յենթակա անհատը, վոր իրեն առաջադրած հարցերին կամ զրգիտներին վորոշ պատասխաններ է տալիս (վոչ անպայման խոսելով):

Երասերիմենտալ մեթոդն այնքան և զարգացել, վոր այժմ հոգեկան կյանքի բոլոր կողմերը յենթարկվում են երասերիմենտալ ուսումնասիրութեան:

Աչքի ընկնող առավելություններից զատ եքսպերիմենտայ մեթոդն ունի մի բանի թերի կողմեր հաս :

ա) Եքսպերիմենտայ մեթոդն ունի մի վտրոշ արհեստականություն . լաբորատորիայի սենյակը, գործիքները, փորձ կատարողի ներկայությունը, փորձվողի այն գիտակցությունը, վոր իր վրա փորձեր են կատարում, ստեղծում են փորձվողի մեջ մի վտրոշ արհեստական, անբնական հոգեկան վիճակ, վորի պատճառով նրա հոգեկան արտահայտությունների մասին իրավունքը չունենք միշտ ել ասելու, վոր նույն մարդն իր բնական, առօրյա վիճակի ժամանակ հասնանքները կրտար :

բ) Թերություն է նաև այն, վոր փորձի յենթակա անձը շահագրգռված է առաճնապես հետաքրքրված չի փորձով . լաբորատորական փորձը փորձվողի բնական, առօրյա կյանքի բաղկացուցիչ մի մասնիկը չի դառնում :

գ) Մյուս թերությունն էլ այն է, վոր եքսպերիմենտի ժամանակ չի ուսումնասիրվում մարդու ամբողջական վարմունքը, այլ վարմունքի այս կամ այն մասը, էլիմենտն է ուշադրության առնվում, վորով չի ստեղծվում վարմունքի ամբողջական պատկեր :

Այս թերությունները, սակայն, այնպեսի հիմնական բնույթ չունեն, վոր առ փոչինչ դարձնեն եքսպերիմենտայ մեթոդի արժեքը : Եքսպերիմենտայ մեթոդի մեջ այնպեսի փոփոխություններ կարելի չի մտցնել, վոր եքսպերիմենտը մտանա բնական պայմաններին և ուսումնասիրության առարկա դառնան հոգեկան ամբողջական յերեույթներ :

Այս ուղղությամբ են աշխատում գերմանական «ստրուկտուր» հոգեբանական ուղղության ներկայացուցիչները : Այս ուղղության եքսպերիմենտի մի սրինակ :

Փորձի յենթակա անհատին տանում են այն սենյակը, ուր տեղի չի ունենալու փորձը . սենյակը սարքավորված է պարզ . մի սեղան, մոտն աթոռ, սեղանի վրա մի քանի առարկաներ (որ . հայելի և այլն), սեղանից վոչ շատ հեռու մի ճոճանակ (МАРТНИК), պատին նկար : Եքսպերիմենտատորը փորձվողին մի փոքրիկ աշխատանք է տալիս և ինքն աննկատ դուրս է դալիս սենյակից : Փորձի յենթակա անձը վերջացնելով էրեն արված աշխատանքը, այնուհետե փաստորեն անգործ է մնում, անելիք չունի : Այս դեպքում փորձվողին չըջպատույ առարկաներն ակտիվ բնույթ են ստանում, կործես ամեն մի առարկա գրգռվում, գրգռվում է փորձվողին, վոր իրեն նայի . նա նայում է հայելու մեջ, ձեռք է տալիս ճոճանակին, գնում է նկարը և այլն : Այդ ժամանակ եքսպերի-

մենտատորը կողքի սենյակից, մի նեղ և աննկատելի ձեղքից, նայում է փորձի յենթակա մարդուն և արձանագրում նրա արարքների հաջորդական կարգը :

Նման նպատակի չե ձգտում նաև «բնական եփայերիմենտի մեթոդը», վորի ժամանակ չկան լաբորատորիական արհեստական պայմաններ, այլ մի վտրոշ յնդիր ուսումնասիրելու համար, փորձի յենթակա անձին արվում են զանազան, վտրոշ տեսակետով ընտրված գրագծունքներ ու աշխատանքներ . փորձի յենթակա անձը կատարում է այդ բոլորը իրեն առօրյա, սովորական գրագծունքներ, իսկ եքսպերիմենտատորը գիտում է փորձվողին և այս ձևով դիտողությունները շարունակելուց հետո, դալիս է վտրոշ յեղբակացության : Այսպես որ . պետք է ուսումնասիրել աշակերտի շարժունակության արագությունը և շարժումների կտորգինացիան : Այդ նպատակին հասնելու համար, աշակերտին կատարել են տալիս վտրոշ տեսակի մարզանքներ, աշխատանքներ, սովորեցնում վտրոշ տեսակի խաղեր և այդ բոլորը դիտելուց հետո, վտրոշ յեղբակացության են դալիս աշակերտի շարժունակության մասին :

III . ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԳԵՆԵՏԻԿ ՄԵԹՈԴ

Եքսպերիմենտայ մեթոդն ուսումնասիրում է մարդու վարմունքի տանձնակի, մասնակի մոմենտները ներկա ժամանակում, բայց լրիվ պատկեր ստանալու համար, պետք է ուսումնասիրել նաև մարդու վարմունքի ծագման աղբյուրը և պարզել այդ վարմունքի պատմական գարգացման ընթացքը : Հարցին այս տեսակետից մոտենալն անհրաժեշտ է լինում մանավանդ այն դեպքում, յերբ մարդու վարմունքը շատ է բարդ և անմիջական անալիզը դժվար : Որ . խոսելու պրոցեսը և սոցիալական բնագոյները մարդու մոտ այնքան են բարդացած կողմնակի հանդամանքներով, վոր անշալի դժվար է կողմնակի և հիմնական հանդամանքներն իրարից ջոկել պարզ դիտողության ոչնույթյամբ :

Այսպիսի դեպքերում ոչպայում ենք համեմատական-գենետիկ մեթոդից, աշխատելով ուսումնասիրել նույն յերեույթի արտահայտություններն անհատի կյանքի մանկական պերիոդում կամ վայրենի կամ քիչ կուլտուրական ժողովրդների կյանքում, նույնիսկ համեմատության ենք վերցնում կենդանիների կյանքը : Այս կերպ ուսումնասիրվում են նախ նույն յերեույթի պարզ, սկզբնական արտահայտությունը և ապա նույն յերեույթի պատմական գարգացման աստիճանները :

Համեմատական-գենետիկ մեթոդը լինում է սկստգենետիկ . յերբ ուսումնասիրության առարկա չե գտնում միևնույն յերեույթի, որ . խո-

սելու պրոցեսի, զարգացման աստիճաններն անհատի կյանքում, իսկ ֆիլագֆենտիկ մեթոդ է կոչվում այն դեպքում, յեբբ ներկա մարդու վարմունքն ուսումնասիրվում է՝ համեմատութան մեջ զբվելով կուլտուրական ավելի ցածր կանգնած ժողովուրդների և կենդանիների համադաստիան վարմունքների հետ:

Մարդու վարմունքի առաջացման և զարգացման խնդիրը լուսարանելիս գլխավորապես պետք է ոգտվել սոցիալական կյանքի վերլուծութունից, վարմունքի մարդու վարմունքի տեսակավորումը պայմանավորված է գլխավորապես սոցիալական հանդամանքներով, հենց դրա համար էլ սոցիալ-գեներտիկ մեքաղը դառնում է հոգեբանության կարեկերագուն մեթոդներից մեկը, վարմունքի հոգեբանությունը վոչ միայն բխողիական, այլև գլխավորապես սոցիոլոգիական կարգի գիտություն է:

IV. ԻՆՔՆԱԳԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂ.

Որչեկտիվ, պարզ գիտողություն, եքսպերիմենտալ և համեմատական—գենետիկ մեթոդները միասին կոչվում են «որչեկտիվ մեթոդներ», վարմունքի ուսումնասիրողը չի հենվում իր անձնական ներքին ուղորմաների վրա (սուբյեկտիվ), այլ ուսումնասիրում է ուրիշի, ուրիշների կամ տեսակի հոգեկան կյանքի որչեկտիվ—ուսալ ֆիզիքական արտահայտությունները (միմիկա, պանտոմիմիկա, աշխատանքային շարժումներ, արտասանած ձայներ և այլն):

Այս մեթոդներից գատ հոգեբանության մեջ դոյություն ունի մի մեթոդ էս, վոր կոչվում է ինֆնադիտողության (ինտրոսպեկտիվ) կամ սուբյեկտիվ մեքաղ: Ինքնագիտողության մեթոդի ժամանակ անհատը ներքնապես և անմիջականորեն գիտողության և յենթարկում իր մեջ կատարվող հոգեկան պրոցեսները, անալիզի յենթարկում նրանց, նրանց մեջ յեղած կատակցությունները պարզում, առ ժամանակ չհետաքրքրվելով այդ յերեզույթների արտաքին—որչեկտիվ արտահայտություններով: Արիստատելից սկսած մինչև այժմ բազմաթիվ հոգեբաններ այս մեթոդի տաղվելությունը տեսնում են նրանում, վոր ուսումնասիրության առարկան, սուբյեկտիվ վիճակները տրված են ուսումնասիրողին անմիջականորեն (իր անմիջական աղբումներն և ուսումնասիրում) և մաքուր վիճակում:

Ինքնագիտողության այս մեթոդն ուժեղ քննադատության է յենթարկվել Կանտի, Հերբարտի, Վուստի, ամերիկյան բիհեվիտրիստ հոգեբանների և ուստական օնֆիլքստոլոգների կողմից:

Հսկատակորդների կողմից այս մեթոդի դեմ արվել են և արվում են հետեյալ առարկությունները:

1. Հոգեկան անմիջական աղբումների ժամանակ անչափ դժվար, նույնիսկ անհնար է դիտել իրեն, այդտեղ աղբումը յերկուսի յե բաժավում. մի կողմից՝ աղբում է մի բան, մյուս կողմից էլ աղբողը դիտում է, թե ի՞նչ է աղբում, ուրեմն, առաջանում է դիտող և դիտված բան, իսկ միևնույն աղբումի յերկուսի բաժանվելը փոփոխություն է մտցնում աղբումի մեջ:

2. Ինքնագիտողության ժամանակ աղբումը փոխում է իր բնույթը կամ անհայտանում է. որ. յեթե փորձում ենք անմիջական աղբումի ժամանակ դիտել մեր գայրույթը կամ ուրախությունը, այդ գայրույթը կամ ուրախությունը գունափոխվում են, կամ անհայտանում, վորչնչանում: Աղբումները չենք դիտում աղբման մոմենտին, այլ նախ՝ աղբում ենք, հետո վերհիշում ենք և վերհիշածը մտքի զբաղման առարկա դարձնում: Հայտնի յե, վոր վերհիշածն ամեն կողմով նման չէ իսկական աղբումին, դրա համար էլ ինքնագիտողության նյութը չի լինում իսկական անմիջական աղբումը:

3. Նույնիսկ այն, ինչ կարելի յե ինքնագիտողությամբ ընդգրկել, վոչ թե ամբողջ աղբումն է իր բազմազան կողմերով, այլ միայն աղբումի ցայտուն, աչքի ընկնող կողմերը, աղբումի մանրամասնություններն ուշադրության առարկա չեն դառնում:

4. Ինքնագիտողության մեթոդի հետ կապված է մի այլ դժվարություն էս. ինքնագիտումը պետք է բառերով արտահայտել, բայց մենք հնարավորություն չունենք բառերով արտահայտելու մեր ներքին աղբումների բոլոր նրբին կողմերը. հոգեկան կյանքի այս թժրին նկատել են դեղեցիկ գրականության շատ անվանի ներկայացուցիչներ (Շիլլեր, Նագսոն, Տոլստոյ և այլն): Ըստ Բեխտերի՝ բառը չի տալիս իրականության ճիշտ պատկերը, բառն իրականության համար միմիայն պայմանական նշան է, ամեն մի բառի տակ տարբեր մարդիկ տարբեր իմաստներ են դնում, ինքնագիտածը բառերով (խոսելով կամ գրելով) արտահայտելու ժամանակ, բուն—իսկական աղբումն արդեն վորոչ փոփոխության է յենթարկվում:

5. Ինքնագիտողության մեթոդին դիմելիս դիտողը վոչ թե գիտում է այն, ինչ կա, այլ այն, ինչ ինքն իրեն ներշնչել է, այն, ինչ ինքն աղասում է, հաճախ նա դիտում է իր յենթադրածը, վոր չկա իսկական աղբումի մեջ:

6. Ինքնագիտողությունը տեղի յե ունենում մի ինֆնատիպ անհատի մեջ, վորը շատ ու շատ կողմերով տարբերվում է այլ անհատներից:

Երևույթը կամովին առաջ բերել, այլ պետք է սպասենք հաջող գիտվածին, չենք կարող յերևույթի մեջ քստ մեր ցանկութեան փոփոխութիւններ մտցնել, այլ յերևույթը պետք է ընդունենք աշխատելու, ինչպես տրված է բնականից: Այս թերին վերացնում է երազերիմենտալ մեթոդը:

II. Եփայերիմենտալ մեթոդ.

Երազերիմենտալ մեթոդը լալսորեն գործադրվում է բնական գիտութեանը մեջ, հոգեբանութեան մեջ այս մեթոդը գործադրութեանը մեջ 19-րդ դարում, իսկ հատուկ արժեք ստացավ Մ. Վ. Վունգարի աշխատանքների շնորհիվ:

Երազերիմենտալ մեթոդն այնքի մշակված է կատարելագործված արջեկտիվ գիտութեան մեթոդ է:

Երազերիմենտալ մեթոդի առավելութեանը հետևյալներն են. 1. Գոյութեան ունի հետազոտութեան, աշխատանքի նպատակ, վոր իշխում է հետազոտման պրոցեսի հաջողական մոմենտների վրա և առաջ է բերում կամավոր և կենտրոնացած ուշադրութեան:

2. Երազերիմենտալ մեթոդը պոչ թե սպասում է, վոր ուսումնասիրելիք յերևույթը պատահականորեն, բնական պայմաններում առաջանա, վոր ուսումնասիրելի, այլ ինքը կամովին և արհեստական միջոցներով (զրգիտներով) ցանկացած ժամանակ և ցանկացած բանակով (կրկնութեաններ) առաջացնում է նույն յերևույթը, վորով ուսումնասիրելիք յերևույթը յենթարկում է իրեն:

3. Ուսումնասիրելիք յերևույթը մի այլ տեսակետից ես, յենթարկվում է երազերիմենտալորեն, նա չի թողնում, վոր նույն յերևույթն ամեն անգամ առաջանա նույն կերպ. նույն կառուցվածքով, այլ նույն յերևույթն արհեստականորեն փոփոխութեան է յենթարկում. որ. ուժեղացնում կամ թուլացնում է զրգիտը, զրգոյի մի վորոշ մասը վերացնում է, կամ ամբողջ զրգիտն է վերացնում, զրգոյի մեջ նոր ելիմենտներ է մտցնում և ապա դիտում է, թե փորձվողի վարմունքի մեջ ի՞նչ փոփոխութեաններ են տեղի ունենում: Յեթե զրգոյի փոփոխութեանների և վարմունքի փոփոխութեանների մեջ մնացորդ մշտաձևութեան է նկատվում, այդ դեպքում զրգոյի և վարմունքի մեջ յենթարկվում է պատճառական կապակցութեան:

4. Երազերիմենտալ ուսումնասիրութեանների արդյունքները կարելի չէ չափել. քվերով արտահայտել: Այս դեպքում չի չափվում ինքը հոգեկան յերևույթն, այլ նրա արջեկտիվ, արտաքին արտահայտութեան:

Հակասակարգների կողմից այս մեթոդի դեմ արվել են և արվում են հետևյալ առարկութեանները:

1. Հոգեկան անմիջական ապրումների ժամանակ անչափ դժգոյար, նույնիսկ անհնար է դիտել իրեն, այդտեղ ապրումը յերկուսի յե բաժակում. մի կողմից՝ ապրվում է մի բան, մյուս կողմից էլ ապրողը դիտում է, թե ի՞նչ է ապրում, ուրեմն, առաջանում է դիտող և դիտված բան, իսկ միևնույն ապրումի յերկուսի բաժանվելը փոփոխութեան է մտցնում ապրումի մեջ:

2. Ինքնագիտութեան ժամանակ ապրումը փոխում է իր բնույթը կամ անկայտանում է. որ. յեթե փորձում ենք անմիջական ապրումի ժամանակ դիտել մեր գայրույթը կամ ուրախութեանը, այդ գայրույթը կամ ուրախութեանը գունափոխվում են, կամ անհայտանում, վորչընչանում: Ապրումները չենք դիտում ապրման մոմենտին, այլ նախ՝ ապրում ենք, հետո վերհիշում ենք և վերհիշածը մտքի զբաղման առարկա դարձնում: Հայտնի չէ, վոր վերհիշածն ամեն կողմով նման չէ իսկական ապրումին, դրա համար էլ ինքնագիտութեան նյութը չի լինում իսկական անմիջական ապրումը:

3. Նույնիսկ այն, ինչ կարելի չէ ինքնագիտութեամբ ընդգրկել, վոր թե ամբողջ ապրումն է իր բաղմագան կողմերով, այլ միայն ապրումի ցայտուն, աչքի ընկնող կողմերը, ապրումի մանրամասնութեաններն ուշադրութեան առարկա չեն դառնում:

4. Ինքնագիտութեան մեթոդի հետ կապված է մի այլ դժգոյարութեան ես. ինքնագիտումը պետք է բառերով արտահայտել, բայց մենք հնարավորութեան չունենք բառերով արտահայտելու մեր ներքին ապրումների բոլոր նրբին կողմերը. հոգեկան կյանքի այս թերին նկատել են զեղեցիկ գրականութեան շատ անպանի ներկայացուցիչներ (Շիլլեր, Նադսոն, Տոլստոյ և այլն): Ըստ Բեխտերի՝ բոլոր չի տալիս իրականութեան ճիշտ պատկերը, բայց իրականութեան համար միմիայն պայմանական նշան է, ամեն մի բանի տակ տարբեր մարդիկ տարբեր իմաստներ են դնում, ինքնագիտածը բառերով (խոսելով կամ գրելով) արտահայտելու ժամանակ, բուն-իսկական ապրումն արդեն վորոշ փոփոխութեան է յենթարկվում:

5. Ինքնագիտութեան մեթոդին դիմելիս դիտողը վոր թե դիտում է այն, ինչ կա, այլ այն, ինչ ինքն իրեն ներշնչել է, այն, ինչ ինքը սպասում է, հաճախ նա դիտում է իր յենթադրածը, վոր չկա իսկական ապրումի մեջ:

6. Ինքնագիտութեանը տեղի չէ ունենում մի ինքնատիպ անհատի մեջ, վորը շատ ու շատ կողմերով տարբերվում է այլ անհատներից.

ինքնագիտողի ազդեցությունն անհատական—սուբյեկտիվ բնույթ ունեն, որովհետև ունեն միմիայն այդ անհատի համար և չեն կարող հիմք ծառայել ընդհանուր—գիտական յեղրակացությունների համար:

7. Ինքնագիտություն մեթոդով հնարավորություն չկա սուսումնասիրելու մտուկներին և կենդանիների պսիխիկան, վերստին հետև մասնակր և կենդանին ինքնագիտություն բնդունակություն չունեն:

Արանք են այն հիմնական առարկությունները, վոր կատարվել են ինքնագիտություն մեթոդի դեմ: Ինչպես ասացինք, հոգեբանների մի մասը մերժում է այդ մեթոդը, իսկ մի մասը հնարավոր է համարում այս մեթոդի գործադրությունը հոգեբանություն մեջ, վորովհետև առարկություններն այնպիսի հիմնական բնույթ չունեն, վոր անկատակաձևի վարձենն ինքնագիտություն մեթոդի ավելորդությունը, այլ միայն դրանք առիթ պետք է դառնան, վոր այդ մեթոդը գործադրվի, վոր այդ մեթոդը հոգեբանություն հիմնական և միակ մեթոդը չհամարվի, և վոր այդ մեթոդով, մի հարց սուսումնասիրելուց հետո, յեղրակացությունները կոնտրոլի, սուսումնասիրելու են որչեկտիվ—էքսպերիմենտալ սուսումնասիրություններով: Որչեկտիվ և սուբյեկտիվ (ինքնագիտություն) մեթոդները վոր թե իրար պետք է մերժեն ու վերացնեն, այլ իրար յրացնեն. այդ տեսակետի վրա յին կանգնած՝ Փեյերբախը, Բուխարինը, Դերոլինը, Ստոյարովը և ուրիշները, ինչպես այդ յերևում է այս առաջադրություն առաջին մասի վերջում բերած ցիտատներից:

### V. ՏԵՍՏԵՐԻ ՄԵԹՈԴ

Հոգեբանական գործնական բնույթի հարցեր սուսումնասիրելու ժամանակ բավական չեն մինչև այժմ նկարագրված մեթոդները, վորովհետև յերկար ժամանակ և տեխնիկական հարմարություններ են պահանջում, այդպիսի դեպքերում գործադրվում է ամերիկյան հոգեբանների անվանած տեսության, ինդիքսների կամ հարցափնտրության մեթոդը. վորը էքսպերիմենտալ մեթոդի պարզ ձևով է:

Առաջին անգամ տեսաի մեթոդ տերմինը գործ է ածել կամելը 1890 թվին. նա առաջադրում էր մարդու անձնավորություն սուսումնասիրություն համար բավականին պարզ յայն անբավարար տեսակ: Այս ուղղությունով ավելի հաջող առաջարկներ է անում Փրանսիացի հոգեբան Ալֆրեդ Բինեն 1896 թվին:

Հոգեբան Շուբերտը տեսաի մեթոդի էությունը ձեզակերպում է ուսպես. «Հոգեբանական տեսաի անհատի կենսագործունեություն գանապան յեղանակներն սուսումնասիրելու համար կարճ է տեխնիկայի»

պարզ էքսպերիմենտալ—հոգեբանական հարցաքննություններ են, վորոնք ձեռնարկվում են գործնական նպատակներով և վորոնց հետևանքները հեշտությամբ յենթարկվում են քանակական և վորակական որչեկտիվ հաշվառման և գնահատվում են վորոն չափանիշներով»:

Տեսաի կազմելիս ի նկատի պետք է ունենալ հետևյալ պահանջները.

ա) Տեսաի պետք է կազմի անձի հոգեկան կյանքի մի վորոն կազմի սուսումնասիրության հետ և յրիվ ու բազմակողմանի կերպով պարզարանի այդ սուսումնասիրությունը:

բ) Տեսաի պետք է յինի «նկուր և ունիվերսալ», այսինքն՝ սուսնց գծվարություն գործադրվի գանապան անձերի սուսումնասիրություն ժամանակ:

գ) Տեսաի պետք է յինի պարզ և կարևատե գործադրություն պահանջի, վորովհետև շատ անձերի սուսումնասիրության տեսակետից սուսումնասիրելիս, ձգձգվող աշխատանքը նպաստավոր չէ:

Տեսաի մի քանի որինակ:

Յերեխաների ու աշակերտների մտայն բնդունակությունները վորոն յնու համար Բենն և Սլամոն հոգեբաններն առաջարկում են հետևյալ տեսակետը.

#### 3 տարեկան յերեխայի համար

1. Յույց տալ քեթը, աչքերը, բերանը:
2. Կրկնել վեց վանկ:
3. Կրկնել յերկու թիվ:
4. Նկարված առարկաների անունը տալ (համապատասխան նկար):
5. Ասել իր ազգը:

#### 4 տարեկանների համար

1. Վորոն յել յնր սեոր:
2. Տալ մի քանի գործնական առարկաների անուն:
3. Յերեք միատեսակ թվերի շարքը կրկնել:
4. Յերկու տարբեր յերկայնքի գծեր համեմատել:

#### 5 տարեկանների համար

1. Համեմատել յերկու ծանրություն (3 և 15, 15 և 6, 3 և 12 գրամ):
2. Աքտանկարել կվազբատ:
3. Կրկնել տասը վանկ:
4. Հաշվել շարք գրամ կամ այլ առարկաներ:

1. Վորոշել սրվա, ժամանակը:
2. Նկարագրել տնային գործածության մի քանի առարկաներ:
3. Արտանկարել հավասարակողմ շեղանկյունի:
4. Հաշվել 13 դրամ կամ այլ առարկաներ:
5. Համեմատել իրար հետ յերեք գույգ նկարված գեմքեր գեղար-  
վեստական տեսակետից:

7 տարեկանների համար

1. Տարբերել աջ և ձախ կողմը:
2. Նկարագրել մի նկար:
3. Նույն ժամանակում տրված մի քանի հանձնարարություններ  
կատարել:
4. Մի քանի տարբեր արժեքի դրամների դումարը գանել:
5. Անվանել չորս հիմնական գույներ:

Նույն տեսակի տեսուր ևն առաջարկվում նաև ավելի մեծ տարիքի  
լեթիսանների համար:

Կոմբինատիվ մտածողությունն ուսումնասիրելու համար Երբինգ-  
հուզը փորձվողին տալիս և տպված փոքրիկ պատմության մի տեքստ,  
փոքրի վորոշ բառերը բաց են թողնված, փորձվողը պետք է կարդա և  
բաց թողած տեղերը լրացնի համապատասխան բառերով:

Աշակերտներից ցույց տված առաջադիմությունը ստուգելու նպա-  
տակով գանազան գիտությունների համար առաջարկվում են գանազան  
տեսուր:

Որ. բնագիտությունից ստուգումներ կատարելու համար այսպիսի  
հարցեր են տրվում.

- ա) Մարտն սրվա, ամսվա թե՞ շաբաթվա անուն է:
- բ) Տրանվայը շարվում է Երկտրականության, գոլորշու, թե՞  
ձիու սւժով:
- գ) Յն՞րը են լինում տարվա ամենակարճ օրերը, դարնանը, ձմեռը  
թե՞ ամառը:
- դ) Բուրդ ստանում են ձիուց, վոշխարից թե՞ խոզից:
- ե) Սենյակում մաքուր ոգ է լինում ձիուց, թե՞ սղափոխու-  
թյունից:

VI. ԱՆԿԵՏԱՅԻՆ ՄԵԹՈԴ

Իր իրադարձման կարճատևությամբ և գործնականությամբ տեղ-  
ուեղի մեթոդին նման է անկետային մեթոդը: Անկետային մեթոդի ժա-

մանակ մի շարք անձերի գրավոր կամ բանավոր հարցեր են տրվում,  
փորոնց պատասխանները պարզում են այդ անձնավորությունների վո-  
րոշ տեսակի վարմունքի բնույթը և առաջացման մտախիմները: Այս մեթո-  
դը գործադրում են այն դեպքում, յերբ հարցի բարդության պատճառով  
այլ մեթոդ գործադրելն անհնար է և կամ յերբ չեն ցանկանում այս կամ  
այն անհատի վորոշ վարմունքի բնութագրերը տալ, այլ նույն վարմունքն  
ուզում են ուսումնասիրել մասսայական մասշտաբով: Այս մեթոդը գոր-  
ծադրում են յորինակ, պարզելու հասուն մաքուր ստեղծագործական  
լեթիվակայության պրոցեսը, յմանկան իղեանները կամ իմացության  
պաշարը, մարդկանց գեպի այս կամ այն պրոֆեսսիան ունեցած հա-  
կումները և այլն:

Անկետային հարցերը տրվում են անմիջապես այն անհատներին,  
փորոնք յենթակա յեն ուսումնասիրության, իսկ հարցերը միջնորդա-  
կան բնույթ են ունենում այն ժամանակ, յերբ ուսումնասիրողը հար-  
ցերը տալիս և այլ անձանց (ծնողներին, ուսուցիչներին), վորպեսզի  
նրանք վորոշ ուղղությամբ գիտողություններ կատարեն և հարցերին  
պատասխանեն:

Վորպեսզի անկետային մեթոդը դրական արդյունքներ տա, պետք է  
աշխատանքը կազմակերպելիս ի նկատի ունենալ հետևյալ հանգամանք-  
ները:

1. Նախապատրաստական աստիճան.

1. Պետք է ճշգրիտ պարզարանել ուսումնասիրության առարկա  
հարցը:
2. Պետք է բանավոր կամ գրավոր պարզորոշ մշակել տրվելիք հար-  
ցերը:
3. Պետք է պարզել փորձը գնելու բոլոր պայմանները (ով է հարց-  
մունքի յենթարկվելու, հարցմունքի տեվորությունը, ով է հարցերը  
տալու և այլն):
4. Հարցերը պետք է մի վորոշ իմաստ ունենան, վորպեսզի բոլոր  
փորձվողներն էլ նույն կերպ հասկանան:
5. Սմեն մի անկետայի մեջ մի հարց պետք է հիմնական նշանակու-  
թյուն ունենա, մնացածները պետք է լրացուցիչ արժեք ունենան և տան  
այնպիսի մատերիալ, վորը պորդարանում է կամ կոնտրոլի յե յենթար-  
կում հիմնական թեման:

2. Աշխատանքի իրացարձման աստիճան.

1. Հարցմունքի յմամանակ հարցվողները պետք է գրված լինեն  
նորմալ պայմանների գրեթե ցույց

2. Հարցերի ձևը պետք է համապատասխանի հարցվողների մտավոր պարզացման աստիճանին:

3. Հարցերը պետք է ներշնչող տարր չունենան:

4. Վորպեսզի հնարավոր լինի փորձել յեզրակացութեան դալ, անկե-տային մեթոդը պահանջում է մեծ չափերով փաստական մատերիալի փութակում: Փորձերը պետք է դրվեն լիակատար նույն պայմաններէ մէջ:

5. Յեթե փորձը կուկտիով բնույթ ունի, փորձի ղեկավարը հետ պետք է աշխատի նաև մի ոգնական, վոր արձանագրում է մանրամաս-նորեն այն բոլոր պայմանները, վորի մէջ տեղի յե ունենում հարց-մունքը:

3. Մշակութան աստիճան.

1. Պետք է պարզել հալարած մատերիալների մշակման մեթոդի-կան՝ ստատիստիկական, ինչպիս և ստացված տվյալների հոգեբանա-կան կվալիֆիկացիայի տեսակետներից:

2. Ստացած մատերիալների արժանահավատութիւնը վորոշելու համար, պետք է հիմնական և լրացուցիչ հարցերի պատասխաններն ի-րար հետ համեմատել:

3. Մատերիալը գնահատելիս պետք է յեղնել փորձի արձանագրու-թիւնից:

4. Մատերիալը մշակելիս պետք է ոգտվել այնպիսի սխեմայից, վորը հնարավորութիւն և տալիս անալիզ անելու տարրեր գործունների տեսակետից (հասակ, սեռ, միջավայր և այլն):

5. Ի՞նչ կարծիք ունեն ղիակակտիկական մատերիալիցմի ներկայա-ցուցիչները հոգեկան սպրումի՝ ա) դոյության, բ) արժեքի, գ) հիմ-նական հատկանիշի, դ) հոգեկանի և ֆիզիոլոգիականի կապի, ե) այլ հատկանիշների, զ) որինակարգութիւն, է) թուխքածե գարգացման յ) ազգոյ ֆակտորների մասին:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ առանձնահատկութիւններ ունի որյեկտիվ պարզ ղիտոգու-թիւն մեթոդը և ինչ պակասավոր կողմեր:

2. Վորո՞նք են եքսպերիմենտալ մեթոդի առավելութիւնները:

3. Ի՞նչ պակասավոր կողմեր ունի եքսպերիմենտալ մեթոդը:

4. Ի՞նչ առանձնահատկութիւն ունի բնական եքսպերիմենտի մե-թոդը:

5. Ի՞նչ առանձնահատկութիւններ ունեն սնտոգենետիկ, ֆիլոզո-գիտիկ և սոցիոգենետիկ մեթոդները:

6. Ի՞նչ է հասկացվում ինքնագլխոգութիւն մեթոդ ասելիս և ի՞նչ թերի կողմեր ունի այդ մեթոդը:

7. Ի՞նչպիս կազմակերպել աշխատանքը ըստ տեսանքի մեթոդի:

8. Ի՞նչ առանձնահատկութիւն ունի անկետային մեթոդը և մեթո-դական ի՞նչ կողմերի վրա պետք է ուշադրութիւն գարձնել այդ մե-թոդը գործադրելիս:

ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԵՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԻՆ

1. Վորո՞նք են որյեկտիվ պարզ ղիտոգութիւն և եքսպերիմենտալ մեթոդների նման և տարրեր կոլմերը:



Մանրք. — 2-րդ առաջադրութիւն 9-րդ յերեսի վերեից 22-րդ տողի տակ պետք է լինեն «կրեշմերի րաժանումը» բառերը, վոր պատահամբ գորս և մնացել:

(14) 589-1930/2

15  
5-16

<< Ազգային գրադարան  
  
NL0151934

